

(1449—1451)⁵⁷, որ մեծ ու փոքր տուրքերն շնորհեց, եւ նոյն տունն պահպանութեան տուրքէն, իշխանական ջաղացքի ծառայութենէն, եւ ամէն իշխանական տուրքերէ եւ ծառայութիւններէ եւ աշխարհական իրաւաբանութենէ ազատ կացոյց⁵⁸, զոր նաեւ Պոկտանի որդին՝ Ստեփան Մեծ իշխանն (1457—1504) հաստատեց 1457ին Օգոստ. 12ին⁵⁹:

Նոյնպէս Յովհաննէս անուն Հայն Սուլափայի մէջ տուն մը ժառանգութիւն թողուց նոյն Մոլտովիցա վանքին, որ եւ Պետրոս Ահարոն իշխանէն հաստատուեցաւ յամին 1454 Հոկտ. 6, որ է ըսել՝ իւր երրորդ անգամ իշխելուն ժամանակ (1451—1455)⁶⁰, եւ հարկէ ազատ կացոյց զայն⁶¹:

Հայք կրնային նաեւ կալուածներ պարգեւել վանքերու. այսպէս Յովհաննէս Արմէնսին Հայը՝ Եաշի Զինուդի մէջ Օսդարգանա գիւղին կէսն ժառանգութիւն թողուց Մոլտովիցա վանքին, զոր Ստեփան Մեծ իշխանն յամին 1483, Յնր. 8ին հաստատեց⁶²:

Նոյն Ստեփան Մեծին ժամանակներն կը յիշուի Սուլափացի հարուստ հայ մը Վարդիկ անուամբ, որ մեռնելու ժամանակ իւր որդւոցը ժառանգութիւն թողուց աներ եւ հայրենական կալուած մը⁶³:

Յամին 1475 դարձեալ հազարաւոր Հայեր եկան Մոլտաւիա, Տաւրիոյ թերակղզիէն (Խրիմ), երբ Տաճիկք եւ Թաթարք զկաֆա առին: Հայք լաւ ընդունելութիւն գտան եւ Ստե-